

# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՆԱԽԿԻՆ ՍԱՆՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ



16434

Կ. ՊՕԼԻՍ, 1914

ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՐԱՍ»



Ն. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ, 1914

ՏՊԱՐԱՆ «ԱՐԱՔՍ»

36175-16434



# Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

## Ն Պ Ա Տ Ա Կ Ը

Ազգային Կեդրոնական Վարժարանի նախկին Սաներու Միութեան նպատակն է՝

1. Ընկերական և բարոյական կապ հաստատել վարժարանին նախկին սաներուն միջև:

2. Սատարել մասնաւորապէս Կեդրոնական Վարժարանի ընդհանուր յառաջդիմութեան:

3. Օժանդակել, միջոցներուն ներս չափով, վարժարանին նոր շրջանաւարտներուն, մասնագիտական ընթացքներու հետեւելու համար:

4. Հետամուտ ըլլալ՝ գործնականապէս իրարու օգտակար ըլլալու:

5. Ունենալ Ակումբ մը և Գրադարան մը:

6. Կազմակերպել ընկերային, զբաղման, զիտական և արուեստից յատուկ դասախօսութիւններ վիճարանական բաժինով, և երեկոյթներ:

7. Ունենալ, առ այժմ, իր տարեկան հրատարակութիւնը որ պարունակէ Միութեան տարեկան ընդհանուր գործառնութեանց Տեղեկագիրը, անդամներու ամբողջական ցուցակը և տարւոյն ընթացքին կատարուած բանախօսութիւնները և այդ առթիւ տեղի ունեցած վիճարանութիւններու ամփոփումը:

## Կ Ա Չ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

8. Միութիւնը կը բաղկանայ Գործօն և պատույ անդամներէ:

9. Գործօն անդամ են Կեղրոնականի բոլոր շրջանա-  
ւարտները անխտիր, ինչպէս նաև այն սաները, որոնք, ա-  
ռանց հաշուելու նախապատրաստական երկու տարիները,  
երեք տարւայ դասընթացք մը բոլորած են վարժարանին մէջ :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— Կեղրոնականի որ և է կազմէ մեկնող սա-  
ներն ալ կրնան Միութեան անդամակցիլ, իրենց փափաքով և Միու-  
թեան հաւանութեամբ :

10. Միութեան պատկանող ամէն անդամ պէտք է 20  
տարեկանը լրացուցած ըլլայ :

11. Նոր շրջանաւարտ ելլողները, որոնք ինքնին ար-  
դէն անդամ կը նկատուին Միութեանս, ժողովներուն կը  
մասնակցին մինչև երեք տարի խորհրդակցական ծայնով,  
ուրիշ վերջ կը դառնան ընտրող և ընտրելի :

12. Պատուոյ անդամ կ'ընդունուին ամէն անձերը ո-  
րոնք նիւթապէս կամ բարոյապէս կը նպաստեն Միութեան  
նպատակին իրագործման : Պատուոյ անդամները ընտրող և  
ընտրելի չեն վարչական պաշտօններու :

13. Անդամներու ընդունելութիւնը տեղի կ'ունենայ  
Ընդհանուր Ժողովի կողմէ, ծայներու  $\frac{2}{3}$  մեծամասնութեամբ  
և զաղտնի քուէով :

14. Այն անդամները որոնք որ և է կերպով անպատ-  
ուարք կը նկատուին Միութեանս, յետ քննութեան և Ընդ-  
հանուր Ժողովի կողմէ մասնաւոր որոշումով, անդամակ-  
ցութենէ դադարեալ կը համարուին :

#### Գ Ո Ր Ծ Ա Դ Ի Ր Մ Ա Ր Մ Ի Ն

15. Միութեան Կոստանդնուպոլսոյ Կեղրոնական վար-  
չութիւնը որ Գործադիր Մարմին կը կոչուի, կ'ընտրուի Ընդ-  
հանուր Ժողովին կողմէ զաղտնի քուէարկութեամբ և ծայ-  
ներու մեծամասնութեամբ : Կը բաղկանայ եօթը հոգիէ :

16. Գործադիր մարմնի պաշտօնավարութեան շրջանը  
երկու տարի է : Անդամները վերընտրելի են :

17. Գործադիր Մարմինը կը վարէ Միութեան ամբողջ  
գործերը, կը ներկայացնէ զայն պաշտօնական առիթներու  
մէջ, կը պատրաստէ նախընթաց տարիի գործունէութեան

և հաշվենքու տեղեկագիրը, յաջորդ տարւոյ նախահաշիւը (budget) կը ներկայացնէ Ընդհանուր Ժողովին՝ տարեշրջանին սկիզբը, կը գումարէ կեդրոնը գտնուող անդամներու մէկ երրորդին զբաւոր առաջարկութեամբ պահանջուած Ընդհանուր Ժողովին արտակարգ նխատրը:

18. Գործադիր Մարմինը կրնայ, ի հարկին, իր պատասխանատուութեան ներքեւ, ժամանակաւոր յանձնախումբեր ընտրել:

19. Գործադիր Մարմինը պարտաւոր է հսկել ներկայ Կանոնագրին տրամադրութեանց և Ընդհանուր Ժողովի կողմէ տրուած որոշումներու անթերի զործադրութեան:

20. Գործադիր մարմինը կ'ունենայ իր նխտերուն ատենագրութեան և հաշուական զործառնութեանց կանոնաւոր արձանագրութեան յատուկ տնօրէններ: Իր բոլոր զանձումները և վճարումները պարտաւոր է միշտ պաշտօնական ընկալագրերով կատարել:

21. Գործադիր Մարմնի Գանձապետը՝ կը վարէ Միութեան դրամարկիւր, ծախքեր կ'ընէ Գործադիր Մարմնի որոշման համեմատ, կը պահէ Միութեան վաւերաթուղթերը, կը ստանձնէ Միութեան զոյքերու և զգումարներու ասպահովութիւնը և կը հսկէ հաշուապահութեան կանոնաւորութեան:

22. Գործադիր Մարմնոյ իւրաքանչիւր անդամ անհատաբար պատասխանատու է Գործադիր մարմնոյ առջեւ, իսկ անհատաբար և հաւաքաբար Միութեան զբանջերուն գոյքերուն և ամէն բանի համար, Ընդհանուր Ժողովի առջեւ:

23. Ընթացիկ ծախքերու համար Գանձապետը կրնայ իր մօտ ունենալ առ առաւելն տասը օսմ. ոսկի: Աւելին ի պահ կը տրուի ծանօթ դրամատուն մը: Գրամատան ամէն զործողութիւն կը կատարուի Միութեան անունով և երկու անդամներու (Ատենապետ կամ Ատենադպիր, և Գանձապետ) ստորագրութեամբ և Միութեան կնիքով:

24. Գործադիր Մարմնի նխտերը օրինաւոր կը հասարուին, երբ առ նուազն չորս անդամներ ներկայ են:

25. Ընկերութեան կնիքը կը պահէ Գործադիր Մարմնի Ասեմնապետը :

26. Գործադիր Մարմինը պարտաւոր է ամիսը անգամ մը ժողով գումարել, Միութեան գործերը տնօրինելու համար : Գործադիր ժողովի երեք յաջորդական նիստերէն առանց բաժնաւոր պատճառի լույսալայտը որ և է անդամ հրաժարած կը նկատուի :

27. Գործադիր ժողովը պէտք է կանոնաւոր թղթակցութեամբ Պոլսէ դուրս գտնուած բոլոր անդամներուն հետ յարաբերութիւն պահէ :

28. Գործադիր ժողովը լուծուած կը համարուի երբ իր մեծամասնութիւնը կորսնցուցած է : Իսկ երբ մեծամասնութիւն ունի, պակասեալ անդամներու տեղ, առաջին գումարած Ընդհանուր ժողովին պարտաւոր է նորեր առաջարկել ի վաւերացում :

#### Ը Ն Գ Տ Ա Ն Ո Ի Ր Ժ Ո Ղ Ո Վ

29. Ընդհանուր ժողովը կազմուած է Միութեան բոլոր անդամներէն, և ունի իր առանձին դիւանը :

30. Ընդհանուր ժողով կը գումարուի տարին երկու անգամ. Նոյեմբեր ամսոյ վերջին Կիրակին և Զատիկ յաջորդ Կիրակին (Նոր Կիրակի) : Այս պարբերական նիստերէն զատ կը գումարուին նաև բացառիկ Ընդհանուր ժողովներ, Գործադիր Մարմնին կամ Ընդհանուր ժողովի կեդրոնի անդամներուն  $\frac{1}{3}$  ին գրաւոր առաջարկութեամբ :

31. Նիստերու գումարման ատեն, Ընդհանուր ժողովը մեծամասնութիւն կազմած կը նկատուի, երբ Կեդրոնի անդամներուն կէսէն մէկ աւելին ներկայ է :

32. Երբ նախապէս որոշուած Ընդհանուր ժողովի նիստը տեղի չունենայ, մեծամասնութիւն չի գոյանալուն, նայն օրոպարզով երկրորդ նիստը վաւերական կը նկատուի ներկայ անդամներով :

33. Ընդհանուր ժողովի գրաւոր հրաւերին հետ, զիւսանք իւրաքանչիւր անդամի հետ պէտք է զրկէ գումարելի ժողովին օրակարգը, կարելի եղածին չափ մամբամասնուած :



Ա Ն Դ Ա Մ Ա Վ Ճ Ա Ր

34. Ամէն անդամ պարտի վճարել մտից գումար մը, կէս օսմ. ոսկի առ նուազն, և տարեկան անդամավճար 60 դրուշ:

35. Անդամավճարները կրնան ըլլալ եռամսեայ, միշտ կանխիկ:

36. Այն անդամները, որոնք ամբողջ մէկ տարի չեն հատուցաներ իրենց անդամավճարը, կրնան անդամակցութենէ դադրած նկատուիլ, Ընդհանուր Ժողովին կողմէ:

ՅԱՆՅԹ.ՈՒԹԻՒՆ.— Գործադիր Մարմնի Դիւանը կրնայ մասաւր կամ ակոորդայիս բողոջ ալյն անդամներու տարեկաներէր, որոնց կողմէ պատճառաբանուած առաջարկ կըլլայ այդ մասին, որ գաղտնի կը մնայ:

37. Այն անդամները որ մէկէն տասը օսմ. ոսկի կը վճարեն, ընդմիշտ զերծ կը կացուցուին անդամավճարէ:

38. Պատուոյ անդամները զերծ են ո՛ր և է հարկեցուցիչ վճարումէ:

39. Խորհրդակցական ծայնով անդամներ կէս անդամավճար կը վճարեն, իսկ մուտքի գումարը կը հատուցանեն երբ ըմտրող և ըմտրելի անդամ դառնան:

ՀԱՍՈՅԹԻ ԱՂԲԻՐՆԵՐ

40. Միութեան հասոյթները կը բաժնուին երկու տեսակի. 1. Հաստատ հասոյթներ, 2. Պատահական հասոյթներ:

41. Հաստատուն հասոյթ են մուտքի և անդամակցութեան վճարումները: Պատահական հասոյթ են՝ նուիրատուութիւն, կտակներ, հանդէսի, ներկայացման և այլ սարքումներէ գոյացած գումարները, դրամազուրխի տոկոսներ, վիճակահանութեամբ շահուած պարգեւներ և եկամուտներ:

42. Հաստատուն հասոյթներէն մուտքի վճարումները, իսկ պատահական հասոյթներուն 70 օ/օ ը անձեռնմխելի են, որոնցմով կը կազմուի Միութեան հիմնական դրամազուրխը:

43. Ի հարկին, Միութիւնը կրնայ հիմնական դրամա-  
զլուխին եկամուտը կամ տոկոսը ամբողջ իր նպատակնե-  
րուն յատկացնել, առանց երբէք ձեռք դպցնելու հիմնական  
դրամազլուխին :

44. Միութեան անունով ամէն շահադիտական գնումի  
յատուկ որոշում որ կը տրուի Գործադիր Մարմնի կողմէ,  
չի կրնար գործադրուիլ, առանց Ընդհանուր Ժողովի վաւե-  
րացումին :

45. Տարեկան նախահաշիւին մէջ նախատեսուած ծախ-  
քերէն դուրս, Գործադիր Մարմինը իր պատասխանատու-  
թեամբ կրնայ վաւերացուած ընդհանուր ծախքերու գու-  
մարին վրայ 10 % աւելի ծախսել: Այս գումարէն աւելիին  
համար միշտ պարտաւոր է դիմել Ընդհ. Ժողովի վաւերա-  
ցումին :

#### ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ

46. Միութեան հիմնական նպատակը անեղծ պահելու  
պայմանով, Ընդհանուր Ժողովը կրնայ Կանոնազրին մէջ  
փոփոխութիւններ մտցնել, ձայներու  $\frac{2}{3}$  ի մեծամասնու-  
թեամբ :

#### Լ Ո Ւ Ծ Ո Ւ Մ

47. Լուծման պարագային Միութեան դրամները և  
գոյքերը կը դառնան Ազգային Կեդրոնական Վարժարանի  
սեփականութիւն :

---

---

Միութեան Կեդրոնատեղին է, առժամապէս՝

5, Պոյան-Օղլու խան, Կալաթա, Կ. ՊՕԼԻՍ

---

---





